որ Այրիվանքի միաբաններից էր, գրել է մի Սաղմոսարան (Ցուց. 4)։

«Կարապետ որդի Տիրատրոյ ի չահաստան տղեկէս Գառնոյ» կրկին ստանում է մի աւետարան իւր ամուսին Եսուկանի հետ և ընծայում «ի սբ մենաստանն ի Հայոց Թառի մեր նորաշէն եկեղեցին ի սբ Կարապետն»։ Յիշատակարանը գրուած է «ի թուականու̃ս Հայոց ՉՀ (= 1321) ի չնահաւոր ամիսն յԱրանց և յառաջնորդութ̃ի որբոյ ուխտիս Հայոց Թառոյ տր Յովանիսի և տր Սարգսի մերոյ նահանգիս վերադիտողի». վերջինը հաւանօրէն Բջնիի եպիսկոպոսն է։ Կարապետ որդի Տիրատրոյ պէտք է շինած լինի այն փոքր եկեղեցին, որ կցուած է բլրի վերայի եկեղեցուն, հարաւային կողմից (պատկ. 5 և 6)։

«Շնորհիւն ա̃յ ես Ստեփանոս Յոհանիսենց եսու գկեր... (?) հող
ԱԵ վանս (?) գվարդնենց (?) եւ այկնեց (?)
եւ այլ արդիւնս ի սբ ուխտս եւ միաբ
անքս էտուն մեզ ։գ։ ժամ ամեն ամին
ինձ»։

Մենք կարող ենք նոյնպէս մօտաւոր կերպով որոշել նոյն եկեղեցու արեւելեան պատին լուսամուտից վեր եղած երկու արձանագրութեանց ժամանակը (պատկ. 8). Նոցանից վերեւինը, որի առաջին երկու տողերի սկզբնաւորութեան քարերն ընկած են, գրուած են Թամարի և աթաբակ Շահնշահի անուան յիշատակութեամբ։ Դա Շահնշահ Գ.ն է, որի եղբայրն էր Տրվանշահ, յիշատակուած իբրև Անիի և Բջնիի տէր 1357 և 1358 թուականների յիշատակարանների մէջ.

Պատկեր 14

Ստեփանոս Յովհաննիսենցի արձանագրութիւնը՝ բլրի եկեղեցւոյ հիւսիսային պատին.

Մօտաւորապէս նոյն ժամանակները՝ 1317 թուին կամ քիչ յետոյ՝ Ստեփանոս Յոհանիսենց (1) իւր նուէրներն է տալիս վանքին և տարեկան երեք ժամ ստանում, արձանագրելով բլրի վերայի եկեղեցու հիւսիսային պատին, փոքր լուսամուտի կողքից (պատկ. 14).

բայց նաև Հանավանքի՝ բանասիրութեան դեռ և անծանօթ՝ մի արձանագրութեան մէջ «դիտափալ Թամարի» հետ, որով այլ ևս կասկածի տեղիք չի մնում նորա անձի և ժամանակի վերաբերութեամբ (1)։ Մեր արձանագրութիւններն, ի հարկէ, կարող են մի քանի տարի առաջ կամ յետ լինել նշանակուած թուականներից.

(1) Այս Ստեփանոսը Գառնեցի պիտի լինի, նոյնպէս եւ ջրաղացի տէր, որ երեք օր «Սոնպենց» սուրբ Աստուածածին վանքին՝ Գառնիում «։գ։ աւր ջաղաց» է տուել եւ տարին երկու պատարագ ստացել։ Այս արձանագրութիւնը քանդակուած է Սոնպենց վանքի գերեզմանատան մատուռի հիւսիսային պատին, որպէս անմիջական շարունակութիւն ոմն Խէրխաթունի եւ իւր Ամիր որդու արձանագրութեան ՉԿԶ (= 1317) թուից. Ստեփանոսի արձանագրութիւնն էլ նոյն թուականից պէտք է ընդունել։

(1) Արձանագրութիւնների եւ յիշատակարանների մէջ աթաբակութեան տիտղոսով յաճախ յիշւում է եւ Շահնշահ Բ., որ փոխճանուեցաւ ՉԿԹ թուականին (Սարգսեան. Տեղագրութիւն. 131։ Ալիշան. Շիրակ. 62։ Կոստանեան. Վիմական Տարեգիր. 160) եւ ոյին չպէտք է շփոթել մեր այս արձանագրութեան Շահնշահի հետ, որ Զաքարեաններից նոյնանուն երրորդն է։ Սորա մասին տե՛ս մեր Խաղբակեանք, 15 եւ 229. նաեւ Զեռ. էջմ. 230|1519, 29ա։